

կտին «հանապազօրեայ սովորութեամբ» մ'անոնց ընդ առաջ վազելով, կը նուիրէին «ձկունս ի յորսոյ», փոխարէնն ընդունելով անոնց սպանած անասուններէն: Եւ ցամաքայնոց հետ միասին այդ ջրայինք ալ կ'ելնէին ազատանւոյն սեղանին վրայ, «յորոց ուրախացեալ բերկրին, կ'ըսէ Ղազար, ձկնակերացն եւ մսակերացն անձինք» (Փրպ. 27-8): Զուկն այնչափ յարգի էր կոչնոց մէջ, որ Արշակունի թագաւորն անոցմէ անպակաս դնելու համար իւր սեղանին վրայ, ունէր յատուկ վայր մը՝ «ձկնատեսանք» կոչուած (Փաւս. 19): Միջին դարուն մամիկոնեան իշխանը Թոռնիկ «կարմրախայտն» իբր յարգի նուէր՝ կը խոստանայ յղել Գր. Մագիստրոսի՝ իւր աներոջ, որ զաւեշտօրէն կը պատասխանէ՝ թէ ինչպէս անոր տենչանօք կը սպասէ «նօթի՝ զայսքան երկարութիւն աւուրց կրել տագնապ քաղցոյ»: Եւ տեսնելով որ կ'ուշանայ, կը պահանջէ խոստացածը զրկել, սպառնալով արձակել անոր դէմ՝ «ճարտասան բանիւք ճայթմունս առասուլթեան, զի ոչ քաղցրասցի, կ'ըսէ, ի կոկորդս քո սպարարտութիւն կարմրախայտիդ», եւ բոլոր կերածներդ «զօրէն կոռնեայ ժայթքեալ արտաքս բերցես» (Մագ. 214-5): Նոյն պահլաւունի իշխա-